# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 03.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/30-5 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան <<20>> հունիսի 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Դիլանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/30-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 03.03.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

**ԳՆՈՐԴ**
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
<<Ինտերմեդ Գրուպ>> ՍՊԸ
ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131
ՀՎՀՀ 02621803
h/h 1930048363450100
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
intermedgroup@inbox.ru
010-39-99-94
Ա. Դիլանյան

---------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.